ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ընդդեմ «Հրապարակ» թերթի՝ ՀՀ արդարադատության նախարարության բողոքի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 27-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ընդդեմ «Հրապարակ» թերթի՝ Hraparak.am ինտերնետային կայքում տեղադրված «ՀՀԿ-ն մշտապես պետք է մեղավորի կարգավիճակով հանդես գա» վերնագրով հարցազրույցի:

Ըստ բողոքի՝ «(...) Հրապարակման մեջ լրագրողը որպես փաստ ներկայացրել է, թե ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանն «աշխատում է քարոզարշավին զուգահեռ՝ օգտագործելով պետական միջոցները՝ ծառայողական ավտոմեքենա, վառելիք, վարորդ և այլն», որը իրականությանը չի համապատասխանել: Արդարադատության նախարարությունը նույն օրը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն, պահանջել է Hraparak.am կայքում հրապարակել դրա հերքումը, որը չի կատարվել»:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. «Հրապարակ» թերթի Hraparak.am կայքում 2018թ. նոյեմբերի 29-ին հրապարակվել է «ՀՀԿ-ն մշտապես պետք է մեղավորի կարգավիճակով հանդես գա» վերնագրով հարցազրույցը՝ այն ժամանակ ՀՀ արդարդատության նախարարի պաշտոնակատար և «Մենք» դաշինքի պատգամավորության թեկնածու Արտակ Զեյնալյանի հետ:

2. Հրապարակման նախաբանում հարցազրույցը վարած լրագրողը գրում է. «Արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը «Մենք» դաշինքից առաջադրված թեկնածու է, նա միաժամանակ ե՛ւ քարոզչություն է անում աշխատանքի ժամին, ե՛ւ աշխատում

որպես նախարար», «(...)նա աշխատում է քարոզարշավին զուգահեռ՝ օգտագործելով պետական միջոցները՝ ծառայողական ավտոմեքենա, վառելիք, վարորդ և այլն»:

3. ՀՀ արդարադատության նախարարությունը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն, պահանջել է Hraparak.am կայքում հրապարակել «(...) օգտագործելով պետական միջոցները՝ ծառայողական ավտոմեքենա, վառելիք, վարորդ և այլն» պնդման հերքումը, ինչը լրատվամիջոցը չի կատարել:

4. Դիտորդ մարմինը 2018թ. դեկտեմբերի 27-ին ստացել է դիմումը և 2019թ. հունվարի 18-ի նիստում կազմակերպել է դրա նախնական քննարկում, ապա, առաջնորդվելով իր Աշխատակարգի 4.11 կետով («4.11. Նախաձեռնության անդամ չհանդիսացող ԶԼՄ-ների հրապարակումների վերաբերյալ բողոքները կարող են քննվել տվյալ լրատվամիջոցի համաձայնության դեպքում: Այսուհանդերձ, տվյալ ԶԼՄ-ի համաձայնության բացակայության դեպքում ԴՄ-ն իրեն իրավունք է վերապահում ներկայացնել փորձագիտական կարծիք հրապարակման վերաբերյալ՝ տարածելով այն իրեն հասանելի միջոցներով»), 2019թ. հունվարի 22-ին նամակով դիմել է «Հրապարակ» թերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանին՝ խնդրելով տալ դիմումը քննելու համաձայնություն:

4. 2019թ. մարտի 19-ի դրությամբ Դիտորդ մարմինը Ա.Օհանյանից պատասխան չի ստացել և իր Աշխատակարգի հիշյալ հոդվածի համաձայն ներկայացնում է իր փորձագիտական կարծիքը:

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք**

Հոդված 8. Հերքման և պատասխանի իրավունքը
(...)
4. Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թեկնածուի մասին տարածված տեղեկատվության հերքումը կատարվում է 24 ժամվա ընթացքում: Եթե մինչև քվեարկության սկիզբը մնացել է ոչ ավելի, քան 24 ժամ, ապա հերքումը կատարվում է դրա մասին պահանջն ստանալուն պես: Նշված ժամկետում հերքման տարածումը հնարավոր չլինելու դեպքում դա պետք է տարածվի սույն հոդվածով սահմանված ժամկետում:

II. **Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր**

1. Ճշգրտություն և անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

1.3. հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից,

1.4. վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա,

1.5. ձգտել, որ հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, վերնագրերը բխեն նյութի բովանդակությունից (...)

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում,

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

1. Դիտորդ մարմինն արձանագրում է, որ տվյալ հրապարակման վերնագիրը չի բխում նյութի բովանդակությունից և չի արտահայտում հարցազրույցի էությունը:

2. Այսուհանդերձ, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը համարում է, որ «**օգտագործելով պետական միջոցները՝ ծառայողական ավտոմեքենա, վառելիք, վարորդ և այլն»** ձևակերպումը կարող է որակվել ոչ թե փաստ, այլ հետևություն, որը բխում է նախորդ պնդումներից, այն է. **«Արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը «Մենք» դաշինքից առաջադրված թեկնածու է, նա միաժամանակ և՛ քարոզչություն է անում աշխատանքի ժամին, և՛ աշխատում որպես նախարար»**, ինչպես

նաև՝ նախարարի պաշտոնակատարի հետագա մեկնաբանություններից։

3. Արդեն նախաբանում հարցազրույցը վարած լրագրողը մեջբերել է նաև նախարարի պաշտոնակատարի մեկնաբանությունը. **«(...) Սա Զեյնալյանը ոչ միայն տարօրինակ չի համարում, այլև գտնում է «օրենքի տառին համապատասխան» հիմնավորումներ (...) «Պիտի ասեմ, որ նախարարի պաշտոնակատարի պարտականությունները կատարելը խոչընդոտում է նախընտրական քարոզարշավին, ես ամբողջ ծավալով չեմ կարողանում մասնակցել նախընտրական քարոզչությանը, հանդիպումներ ունեցել եմ, այո, իմ ընտրողների հետ իմ ընտրատարածքում ու նաև Կենտրոն համայնքում, հիմա էլ գնում եմ հանդիպման», - ասաց նա»**։

4. Հարցազրույցում նախարարի պաշտոնակատարը մեկնաբանում է բերված փաստերը, այսինքն՝ հնարավորություն է ստանում առարկելու վիճարկվող պնդումներին.

Մեջբերում հարցազրույցից.

«- Բայց Ձեր դեպքում կարող է ընկալվել, որ Դուք նաև որպես նախարար եք ներկայանում քարոզարշավին, և դա դիտվի որպես վարչական ռեսուրսի օգտագործում, բացի այդ՝ աշխատանքային ժամին եք գնում քարոզչության, ինչպես հասկացա։

- Ճիշտ հակառակը, ես քարոզչության ժամանակն օգտագործում եմ իմ գործառույթներն իրականացնելու համար, սա հակառակ էֆեկտն ունի, և բան փոխվել է, փաստորեն, հեղափոխությունից հետո։ Իսկ աշխատանքային ժամ նախարարի համար չկա, նախարարը միշտ նախարար է, նորմավորված չէ նրա ժամկետը, և տվյալ դեպքում էդ բացասական հետևանքները կրում եմ ես՝ որպես թեկնածու։ «Աշխատանքային ժամ» հասկացությունը քաղաքական պաշտոնների վրա չի տարածվում։ Չնորմավորված են նախարարի գործառույթները՝ տարին 12 ամիս, 24 ժամ, շաբաթական յոթ օր նա նախարարի գործառույթ է իրականացնում մշտապես։ Տվյալ դեպքում իմ գործառույթների էդ հատվածը տեղափոխում եմ՝ երեկոյան ժամերին եմ իրականացնում» (մեջբերման ավարտը)։

5. Ելնելով վերոգրյալից՝ Դիտորդ մարմինը համարում է, որ «Հրապարակը» կարող էր մերժել հերքման պահանջը, քանի որ արդեն իսկ այդ պնդումները հերքվել են նախարարի խոսքում, և լրատվամիջոցը պահպանել է մյուս կողմի տեսակետը ներկայացնելու սկզբունքը։

6. Դիտորդ մարմինը հորդորում է լրատվամիջոցների

ղեկավարությանը՝ նման իրավիճակներում արձագանքել հերքման պահանջին և հիմնավորել պատասխանը կամ հերքումը չհրապարակելը:

7. Դիտորդ մարմինը նաև հիշեցնում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռների (օրինակ՝ «Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի») հանրահայտ ձևակերպումը. «Ընդունելի քննադատության սահմաններն ավելի լայն են, երբ խոսքը վերաբերում է ոչ թե պարզապես մասնավոր անձի, այլ իբրև հանրային դեմք հանդես եկող քաղաքական գործչին: Վերջինս իր գործողություններն ու վարքը անխուսափելիորեն և գիտակցաբար դնում է ինչպես լրագրողների, այնպես էլ հասարակության ակնդետ վերահսկողության տակ, և այդ պատճառով պետք է առավել հանդուրժողականություն ցուցաբերի, և հատկապես՝ երբ ինքն է անում հրապարակային հայտարարություններ, որոնք կարող են քննադատության ենթարկվել»:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2019թ. մարտի 19-ի նիստում, Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արա ՇԻՐԻՆՅԱՆ, «Շողակաթ» հեռուստաընկերության գեղարվեստական ղեկավար

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: